



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ՆԱՀԿ գրասենյակն աջակցում է լուծումներ գտնելու համաշխարհային ճգնաժամի հետևանքներին

ԵՐԵՎԱՆ, 7 հուլիսի 2009 - Այսօր Երևանում ՆԱՀԿ աջակցությամբ կազմակերպված խորհրդաժողովի առանցքում գլոբալ ճգնաժամի ներգործությունն է Հայաստանի վրա:

Եռօրյա խորհրդաժողովի շրջանակներում բարձրաստիճան պաշտոնյաներ, պետական և միջազգային կառույցների ներկայացուցիչներ և փորձագետներ կքննարկեն գլոբալ ճգնաժամի ազդեցությունը ձևավորվող և զարգացող տնտեսությունների վրա՝ առաջարկելու արդյունավետ ռազմավարություն՝ ապահովելու Հայաստանի տնտեսության վերականգնումը:

ՆԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինոսն անդրադարձավ միջազգային կառույցների դերին՝ համաշխարհային ճգնաժամի բացասական հետևանքների նվազեցման գործում. «Համաշխարհային տնտեսական ճգնաժամի երկրորդ ավիքը երկիրը դարձրեց առավել խոցելի, և մենք պետք է հրատապ միավորենք ջանքերը՝ հացթահարելու ճգնաժամի հետևանքները», - ասաց նա. - «Հույժ կարևոր է իրականացնել խթանող քաղաքականություն՝ ձևավորելու ավելի մրցակցային և բազմատարր տնտեսություն: Ավելի լավ համագործակցությունը՝ աջակցելու տնտեսության կտրուկ վերականգնման և աճին, պետք է լինի կարևորագույն խնդիրներից մեկը միջազգային կառույցների օրակարգում »:

Միջոցառումը կազմակերպվել է Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խմբի կողմից՝ ՆԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ, ինչպես նաև՝ Եվրոպական հանձնաժողովի հայաստանյան պատվիրակության, ՄԱԶԾ, Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և Հայաստանի կառավարության կողմից:

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանն իր բացման խոսքում ներկայացրեց իրավիճակի հաղթահարման ուղղությամբ կառավարության ընթացիկ և նախատեսվող միջոցառումները: Երկարաժամկետ ռազմավարությունը ներառում է գործարարության համար բարենպաստ միջավայրի ստեղծում, տնտեսության բազմազանում, առկա մենաշնորհները սանձահարելու օրենսդրական և ադմինիստրատիվ բարեփոխումներ, նաև բարեփոխումներ հարկային և մաքսային վարչարարությունում՝ հաղթահարելու ստվերային տնտեսությունը:

«Բոլոր այս բարեփոխումները իրագործման կարիք ունեն, և կառավարությունը պատրաստ է բաց երկիտության՝ քննարկելու այդ խնդիրները: Այդն էս ողջունում են այսօրվա խորհրդաժողովը և երիտասարդ փորձագետների ջանքերը, ովքեր ուզում են ունենալ ներդրում այս գործընթացում: Ես հավաստիացնում եմ ձեզ, որ Կառավարությունն ի նկատի կունենա բոլոր կարծիքները և առաջարկները, որոնք կներկայացվեն այս խորհրդաժողովի ընթացքում», - ասաց նա:

Հայաստանում տնտեսական զարգացումը խթանելու նպատակով մի խումբ երիտասարդների կողմից ձևավորված Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խմբի խորհրդի անդամ Արմինե Խաչատրյանը նշեց. «Ակնհայտորեն մենք չենք կարողանա գտնել բոլոր լուծումները այս եռօրյա թեժ

քննարկումների արդյունքում, սակայն մենք կփորձենք նոր շունչ հաղորդել փորձագետներին և դասեր քաղել քննարկումից»:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակն աջակցում է մի շարք միջոցառումների՝ ճգնաժամի բացասական արդյունքների նվազեցման ուղղությամբ՝ հաղթահարելու համաշխարհային ճգնաժամի հետևանքները:

Լրացուցիչ տեղեկության համար խնդրում ենք դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի մամուլի և հանրային տեղեկատվության հարցերով ավագ օգնական Գայանե Տեր-Ստեփանյանին՝ հեռախոսով (+374 10) 22 96 10/ 11/12/13/145407, քցջ. (091) 012603: